ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 1-ին, Բ կիրակի (Ծիսնակաց).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Դեկտեմբերի 8-ին, Գ կիրակի (Ծիսնակաց).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անուշավան աբղ. Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը հանգամանալից քարոզ խոսեց, որից հետո կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ահեղ երկրաշարժի զոհերի համար (Տես էջ 106):

***

Դեկտեմբերի 15-ին, Դ կիրակի (Ծիսնակաց).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զարեհ աբղ. Կաբաղյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***

Դեկտեմբերի 22-ին, Ե կիրակի (Ծիսնակաց).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բարկեն աբղ.

Սալբյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***

Դեկտեմբերի 24-ին, երկուշաբթի. — Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին.

Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոս Նախավկայի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագի ընթացքում Հոգևոր ճեմարանի յոթ շրջանավարտ սաներ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվեցին սարկավագ: (Տես էջ 185):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Դեկտեմբերի 29-ին, Զ կիրակի (Յիսնակաց).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Դերենիկ աբդ. Դավթյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: